



ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ԶԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔ

<<ՀԵՔԻԱԹ>>

ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ
ՀՈԱԿ

2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.

Սույն փաստաթուղթը «Հեքիաթ» մուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից՝ իրականացված ներքին գնահատման արդյունքում կազմված հաշվետվություն է՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N764-Ն որոշման համաձայն:

Ներքին գնահատումն իրենից ներկայացնում է մատուցվող կրթական ծառայությունների որակի մշտադիտարկման և հսկողության իրականացման գործընթաց:

Ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատման նպատակն է.

- 1) նախադպրոցական կրթության բնագավառում պետական քաղաքականության միասնականության ապահովման, նախադպրոցական կրթության որակի բարելավման և արդյունավետության բարձրացմանը նպաստելը.
- 2) ուսումնական հաստատությունների միջև կրթական ծառայությունների մատուցման որակի և արդյունավետության բարձրացմանն ուղղված մրցակցության ձևավորումը.
- 3) շահառուների՝ սաների և նրանց ծնողների (օրինական ներկայացուցիչների), հաստատության մանկավարժական աշխատողների, նախարարության, տարածքային կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, կրթության հարցերով զբաղվող կազմակերպությունների, գործատուների շրջանում հաստատության գործունեության վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացումը.
- 4) ուսումնական հաստատությունների հաշվետվողականության մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը՝ գործունեության թափանցիկության ապահովմանը նպաստելը:

Ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատման խնդիրն է.

- 1) կրթական ծառայությունների որակի և արդյունավետության համեմատական գնահատումը.
- 2) կազմակերպել կարողունակահեն ուսումնադաստիարակչական գործընթաց՝ ձևավորելով կարողունակ սան, նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշի պահանջներին համապատասխան:
- 3) ուսումնական գործընթացի կազմակերպման պայմանների և դրանց բարելավմանն ուղղված աշխատանքների գնահատումը.
- 4) նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման, ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության գնահատումը.
- 5) մատուցվող կրթական ծառայությունների որակի համապատասխանության և կրթական գործընթացի արդյունավետության մասին կրթական գործընթացի մասնակիցներին և հասարակությանն իրազեկումը.

Հաստատության ներքին գնահատման ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները.

- Վիճակագրական տվյալների վերլուծություն
- Փաստաթղթային վերլուծություն
- Դիտարկում և փաստագրում
- Հարցաթերթիկների արդյունքների վերլուծություն/ առցանց/

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԳԸ

- Ներքին գնահատումն իրականացվում է տարին մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը: Ներքին գնահատմանը մասնակցում են ուսումնական հաստատության վարչական և մանկավարժական աշխատողները, ծնողները (օրինական ներկայացուցիչները):
- Ներքին գնահատման հաշվետվությունն ուսումնական հաստատության տնօրենը մինչև նոր ուսումնական տարվա մեկնարկին հաջորդող 5-րդ աշխատանքային օրը հրապարակում է տվյալ ուսումնական հաստատությունում (տեսանելի տեղում), հաստատության կայքում և ներկայացնում է հրապարակման համայնքի կայքում:
- Ներքին գնահատումն իրականացվում է ուսումնական հաստատության տնօրենի հրամանի համաձայն ձևավորված հանձնաժողովի կողմից:
- Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ուսումնական հաստատության մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից բաց քվեարկությամբ ընտրված անդամները:
- Տնօրենը հանձնաժողովի նախագահն է և ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը:
- Հանձնաժողովը հաստատում է իր աշխատակարգը, սահմանում ներքին գնահատում անցկացնելու գործողությունների ծրագիրը:

<<Հեքիաթ>> մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ներքին գնահատումն իրականացվել է հաստատության տնօրենի 2024 թ-ի սեպտեմբերի 4-ի N 99-Լ հրամանով կազմավորված հանձնաժողովի կողմից, որի անդամներն են հանդիսանում՝

Էլմիրա Հակոբյան - հանձնաժողովի նախագահ/ մանկապարտեզի տնօրեն/

Ելենա Թումանյան- հանձնաժողովի քարտուղար/ փոխտնօրեն՝ կազմ. գծով/

Էլմիրա Ղափայան - հանձնաժողովի անդամ/ ուս. գծով փոխտնօրեն՝ մեթոդիստ/

Գոհար Կարպետյան- հանձնաժողովի անդամ/ ֆիզիքահանգիյ/

Գոհար Հակոբյան- հանձնաժողովի անդամ/ մանկավարժ - հոգեբան/

Ծնողական խորհուրդ

Զեփյուռ Դավթյան

Անի Մելիքյան

Արփինե Գրիգորյան

Հերմինե Թորոսյան

Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

«12» 07. 2022թ. N 1275-Ա/2 հրամանի

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
<<ՀԵՔԻԱԹ>> ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉ ՀՈԱԿ-Ի ՄԱՍԻՆ

Կազմակերպության անվանումը՝ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի <<Հեքիաթ>> մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ

Կազմակերպչաիրավական տեսակը՝ Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն /ՀՈԱԿ/

Մեփականության ձևը՝ անհատույց օգտագործման իրավունք

Հասցե՝ ք. Չարենցավան, Շինարարների փողոց, թիվ 4 շինություն

Հեռ.՝ +37499032040

Պաշտոնական կայք էջ՝ [Heqiat Mankapartez /facebook/](https://www.facebook.com/HeqiatMankapartez)

1. <<ՀԵՔԻԱԹ>> ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉ ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

Ցուցանիշ	Այո	Մասամբ	Ոչ
ա. ուսումնական հաստատությունն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից.	✓		
բ. ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սաների ազատ տեղաշարժման համար.	✓		
գ. արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ ուսումնական հաստատության շենքին.		✓	
դ. ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, աղբը կանոնավորապես հավաքվում է հատուկ աղբարկղերում և դուրս է բերվում հաստատության տարածքից.	✓		
ե. ուսումնական հաստատության ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝	✓		

կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ.			
--	--	--	--

Ներքին գնահատման հանձնաժողովի կողմից իրականացված դիտարկման և փաստագրման արդյունքում արձանագրվեց, որ ուսումնական հաստատության տարածքը մեկուսացված է ավտոճանապարհային գոտուց՝ մայթեզրով, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող օբյեկտներից:

Արդյունաբերական, սպասարկող օբյեկտներից /գործարան, բենզալցակայան, ռեստորան/ մանկապարտեզի շենքը գտնվում է մոտ 300 - 500մ հեռավորության վրա:

Հարկ է նշել, որ հաստատության տարածքին կից՝ ցանկապատից դուրս, շատ մոտ տարածքում գտնվում է էլեկտրական բաշխիչ կայան, որի անվտանգությունը իրականացվում է Չարենցավանի էլեկտրոցանցեր ԲԲԸ-ի կողմից:

Մանկապարտեզի բակային հատվածում սահմանված բարձրության վրա տեղակայված են գազի մատակարարման խողովակներ, իսկ մանկապարտեզի ջեռուցման կաթսաները գտնվում են լվացքատան հատվածում, որը գտնվում է մանկապարտեզի հետնամասում:

Գազի սպասարկման, անվտանգ օգտագործման աշխատանքները իրականացնում են Չարենցավանի գազի սպասարկման ծառայությունը:

Հաստատության տարածքը ցանկապատված է երկաթե ցանկապատով, անվտանգ՝ սաների ազատ տեղաշարժի համար: Հաստատության երկաթե ցանկապատի ճաղերի խտությունը թույլ է տալիս, որպեսզի մանկապարտեզի բակ չներթափանցեն թափառող շներ, կատուներ:

Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները մասամբ /մանկապարտեզի ետնամասի երկաթյա դարպասները ամբողջությամբ բացվում են և արտակարգ իրավիճակների մեքենաները անարգել կարող են մուտք գործել հաստատություն, իսկ շենքի դիմացի դարպասը միայն նախատեսված է մարդկանց ելումուտի համար/ կարող են մոտենալ ուսումնական հաստատության շենքին:

Ուսումնական հաստատության տարածքում ամեն օր կազմակերպվում է տարածքի մաքրման աշխատանքներ, հաստատության հավաքարարի կողմից, աղբը դուրս է բերվում հատուկ պոլիէթիլենային տոպրակներով և Չարենցավանի <<Բարմաք>> ՓԲԸ կողմից կատարվում է աղբի տեղափոխման աշխատանքներ:

Հաստատությունը յուրաքանչյուր տարի կնքում է պայմանագիր <<Չարենցավանի կանխարգելիչ ախտահանում>> ԴՓԲԸ-Ի հետ և տարվա ընթացքում ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում է միջոցառումներ՝ կրծողների, վտանգավոր միջատների դեմ:



File.PDF



դեռատիզացիա.pdf

2024

2025







2. <<ՀԵՔԻԱԹ>> ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ՄԱՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

(ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված անվտանգության և առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 20-ի N 857-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերը)

Ցուցանիշ	Այո	Մասամբ	Ոչ
ա. ուսումնական հաստատության շենքը վերանորոգված է.	✓		
բ. ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված շահագործման անվտանգության նորմերին.	✓		
գ. շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր.	✓		
դ. ուսումնական հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով.	✓		
ե. շենքը հարմարեցված է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԶԱՊԿ) ունեցող սաների անվտանգ տեղաշարժ ապահովող պայմաններին (թեքահարթակներ, լայն դռներ և այլն).		✓	
զ. ուսումնական հաստատությունն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով, տանիքը պատված է հրակայուն նյութերով.	✓		
է. համակարգչային սարքավորումները, հեռուստացույցներն ամուր եւ տեղադրված և ամրացված են աշխատատեղերին.	✓		
ը. անիվներով տեղաշարժվող ծանր իրերն ամրացված են հատակին.	-		
թ. բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները դեկորատիվ իրերը.	✓		
ժ. ուսումնական հաստատության միջանցքների հատակները սայթաքուն չեն, իսկ եթե ծածկված են ուղեգորգերով, ապա դրանք ամրացված են	✓		

հատակին.			
ժա. ստորին հարկերի պատուհաններն ունեն շարժական մետաղյա փանդակաճաղեր.			✓
ժբ. ուսումնական հաստատության կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է.	✓		
ժգ. ուսումնական հաստատությունում մշակված և առկա է սաների ու անձնակազմի տարհանման պլան, որում հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները.	✓		
ժդ. ուսումնական հաստատության նախասրահում, բոլոր հարկերում, խմբասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցադրանքով.	✓		
ժե. ուսումնական հաստատության տարհանման ուղիներն ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով.	✓		
ժզ. ուսումնական հաստատությունում սաների թիվը համապատասխանում է հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին.	✓		
ժէ. խմբասենյակներում սեղան և աթոռների թիվը համապատասխանում է առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 12-ի N 50-Ն հրամանին:	✓		

- Ուսումնական հաստատության շենքի մի մասնաշենքը վերանորոգվել է 2010թ՝ Չարենցավանի քաղաքապետարանի և ՎԻՎԱ-ՍԵԼ-ՄՏՄ-ի համագործակցության արդյունքում, իսկ 2023թ-ին սոցիալական ծառայությունների պատասխանատվության ծրագրերի շրջանակներում <<ԱԼԱՓՄԵՏ>>ՓԲԸ-ի, <<ԱԼ-ԱՆ ՇԻՆ>>ՍՊԸ-ի և Չարենցավանի համայնքապետարանի համագործակցությամբ վերանորոգվել է երկրորդ մասնաշենքը և ամբողջությամբ կահավորվել:
 Ուսումնական հաստատության խմբասենյակները, սանհանգույցները կապիտալ վերանորոգված են: Հաստատությունում տեղադրված են եվրոդռներ և պատուհաններ: Հաստատությունն ապահովված է ջեռուցման, օդափոխության համակարգերով, ջրամատակարարման ներքին ցանցով, որը 2022թ ամբողջությամբ նորացվել է, ինչը թույլ է տալիս հաստատության և սաների սանիտարահիգիենիկ կանոնների պահպանմանը:
 2021թ ՏԿԵՆ նախարարության նախաձեռնությամբ հաստատությունում տեղադրվեցին արևային կայաններ, որը նպաստում է էլեկտրաէներգիայի ծախսի խնայողությանը:

Ջրահեռացումը հաստատությունում իրականացվում է կոյուղատար խողովակների միջոցով:

Դիտարկման և փաստագրման հանձնաժողովի կողմից արձանագրվեց, որ հաստատությունում առկա բաց պատշգամբները յուրաքանչյուր տարի ունենում են մասնակի վերանորոգման կարիք՝ պայմանավորված տարածքի բնակլիմայական պայմաններով: Պատշգամբները ներսից, վերը նշված հանգամանքով պայմանավորված, խոնավանում են և պատճառ հանդիսանում բորբոսի և փլուզման: Խնդիրը խորքային է և լուծման համար անհրաժեշտ է ֆինանսական լուրջ միջոցներ և շինարարական միջամտություն:

- <<Հեքիաթ>> մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ը հիմնովին վերանորոգված է քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված շահագործման անվտանգության նորմերի համաձայն:

Շենքը դիմակայում է աղետների՝ ուժեղ քամիների, սողանքների, երկրաշարժերի, հրդեհների նկատմամբ:

- <<Հեքիաթ>> մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ը ապահովված է հակահրդեհային անվտանգության համակագով, առկա են հակահրդեհային անվտանգության միջոցներ: Առկա է կապի և ազդարարման համակարգ, որը տեղադրված է դահլիճի դռան մոտ և հասանելի է բոլորին:

Ուսումնական հաստատությունում առկա է մեկ գլխավոր և երեք պահուստային ելքեր,

որոնք բացվում են դեպի դուրս, անցանելի են և արգելափակված չեն:

Տանիքը վերանորոգված է հրակայուն նյութով:

- Հանձնաժողովի կողմից իրականացված դիտարկման-փաստագրման արդյունքում արձանագրվեց, որ շենքի երկու հարկերում փակցված են տարհանման պլան սխեմաներ, որը արտացոլում է հաստատության հատակագիծը, ելքային, մուտքային դռները, հակահրդեհային միջոցների տեղակայման վայրերը: Համապատասխան նշանները ցույց են տալիս ելքերը, հակահրդեհային միջոցների տեղակայման վայրերը:

- Հաստատությունում առկա են կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԶԱՊԿ) ունեցող սաների անվտանգ տեղաշարժ ապահովող պայմաններ՝ լայն բացվող դռներ, առկա է թեքահարթակ մուտքի մոտ և շենքի առաջին հարկում, սակայն թեքահարթակների մոտ բազրիքներ չկան:

- Հեռուստացույցներ և համակարգիչներ խմբասենյակներում առկա չեն, իսկ վարչական անձնակազմի աշխատասենյակներում համակարգիչները հարմարեցված են աշխատասեղաններին:

- Անիվներով տեղաշարժվող ծանր իրեր գոյություն չունեն: Խմբասենյակներից բոլոր տեսակի ծանր իրերը, ինչպես նաև ծաղկամանները հեռացված են:

Միջանցքներում կան ծաղկամաններ, որոնք հարմարեցված են հատակին:

- Միջանցքների հատակը սալիկապատ է, սայթաքում չէ և չկան ուղեգորգեր, իսկ խմբասենյակների հատակը լամինատապատ է:

- Հաստատության ստորին հարկերի պատուհաններին մետաղական ճաղեր ամրացված չեն:

- Ձեռք բերված նոր գույքը համապատասխանում է երեխաների տարիքին և թվին, շահագործման համար անվտանգ է և համապատասխանում է

առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 12-ի N 50-Ն հրամանին:

- <<Հեքիաթ>> մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ը 2019 փետրվարի 15-ից ՀՀ ԿԳՄՄ նախարարության ԼԻՑԵՆԶԻԱ N 0577-ի համաձայն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր:

Գործում է 5 տարիքային խումբ՝ կրտսեր առաջին, կրտսեր երկրորդ, միջին <<ա>> ն/դ, միջին <<բ>> ն/դ և ավագ ն/դ խմբեր:

<<Հեքիաթ>> մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ը ամեն տարի, խմբերի փոփոխության հետ կապված, դիմում և ստանում է լիցենզիայի նոր ներդիր, որի համապատասխան իրականացնում է խմբերի ձևավորում և համալրում:




ներդիր.pdf




licenzia.PDF









Խմբասենյակ	Խմբասենյակի մակերեսը (քմ)	Մեկ սանին բաժին ընկնող մակերեսը (քմ)	Նորմերից պակաս կամ ավելի մակերեսը (քմ)
Կրտսեր առաջին խումբ	80մ ²	3. 0մ ²	Նորմա
Կրտսեր երկրորդ խումբ	97. 5մ ²	3. 0մ ²	Նորմա
Միջին<<ա>>խումբ	97. 5մ ²	3. 0մ ²	Նորմա
Միջին<<բ>>խումբ	97. 4մ ²	3. 2մ ²	Նորմա
Ավագ խումբ	96. 8մ ²	2. 5մ ²	Նորմա

Ըստ-քաղաքաշինության կոմիտեի սահմանած չափանիշի խմբասենյակում մեկ երեխայի համար նախատեսված է 2քմ տարածք, ննջարանում՝ 2քմ, հանդերձարան՝ 1քմ, զուգարան՝ 0,9քմ: /քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով սահմանված շահագործման անվտանգության նորմերի/:

Մանկապարտեզի յուրաքանչյուր խմբի տարածքի մակերեսը համապատասխանում է սահմանված նորմերին և երեխաների թվաքանակին: Խմբասենյակները իրենց չափերով ապահովում են երեխաների շարժվելու և մաքուր օդի պահանջը:

3. ՄԱՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄ

Ցուցանիշ	Այո	Ոչ
ա. ուսումնական հաստատության անձնակազմը և սաները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին.	√	
բ. ուսումնական հաստատության անձնակազմը և սաները տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, հրշեջ-տեղեկատու, հրշեջ-ծորակ և այլն) գտնվելու տեղերի վերաբերյալ, իսկ անձնակազմը տիրապետում է դրանց օգտագործման կանոններին.	√	
գ. հաստատությունում իրականացվում են տեղական նշանակության վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության վերաբերյալ տարաբնույթ միջոցառումներ.	√	
դ. ուսումնական հաստատությունում առկա է աղետներին պատրաստվածության, քաղաքացիական պաշտպանության պլան, և ուսումնական տարվա ընթացքում գործարկվում է պլանը, իրականացվում են վարժանքներ, վարվում է գրանցամատյան.	√	
ե. ուսումնական հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով.	√	
զ. ուսումնական հաստատության բոլոր խմբասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին խմբասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 12-ի N 50-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ	√	

նորմերին.		
է. ուսումնական հաստատության միջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 12-ի N 50-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին.	√	
ը. ուսումնական հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով.	√	
թ. ուսումնական հաստատության բոլոր խմբասենյակներում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ	√	
ժ. ուսումնական հաստատության բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարա-գաներով (օձառ, թուղթ և այլն).	√	
ժա. հաշմանդամություն ունեցող անձանց համար կա հարմարեց-ված սանհանգույց, որի մոտ առկա է հաշմանդամության տարբերանշանք.		√
ժբ. ուսումնական հաստատությունում առկա է սննդի կազմակերպման կետ, որը համապատասխանում է առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 12-ի 50-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին:	√	
ժգ. ուսումնական հաստատության սննդի կազմակերպման կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ.	√	
ժդ. ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ, և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն.	√	

- 2024-2025 ուս տարվա <<Հեքիաթ>> մուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տարեկան աշխատանքային պլանով, և 2022-2025թթ Աղետների ռիսկի կառավարման միջոցառումների պլան ժամանակացույցով նախատեսված է եղել անցկացնել անվտանգության, տարահամման, ուսուցողական, տեղեկատվական տարբեր միջոցառումներ, վարժանքներ՝ նպատակ ունենալով սովորեցնել, ամրապնդել անվտանգության պահպանման, ապահովման ուղղությամբ՝ անձնակազմի, ծնողների և սաների տեսական գիտելիքներն ու հմտությունները՝ գործնականում ճիշտ կիրառելու և արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելուն և վարքականոնները գործածելու համար:

- Մանկապարտեզի անձնակազմը և սաները տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, հրշեջ-վահանակ, կրակմարիչներ, կապի և ազդարարման համակարգ) գտնվելու վայրի վերաբերյալ, իսկ անձնակազմը տիրապետում է դրանց օգտագործման կանոններին:
- <<Հեքիաթ>> մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրենի 2022թ-ի դեկտեմբերի 15-ի N 106 –Լ և 2022թ-ի դեկտեմբերի 15-ի N 107 Լ- հրամանով՝ հաստատվել է 2022-2025թթ Աղետների Ռիսկի Կառավարման միջոցառումների պլան ժամանակացույցը, ԱՌԿ-ի կառավարման խորհրդի կազմը, աշխատակարգը և գործառույթները:
Պլանում ներառված են ԱՌԿ –ի ոլորտային պատասխանատուների /թվով 6 անձ/ աշխատանքները, ովքեր իրականացնում են աշխատակիցների, ծնողների և սաների շրջանում պլանավորած գործողություններ՝ դասընթացներ, խորհրդատվություններ, գործնական աշխատանքներ, սեմինարներ՝ արտակարգ իրավիճակում արագ, ճիշտ կողմնորոշվելու կարողություններ և հմտություններ ձեռք բերելու համար:
Կատարված աշխատանքները արձանագրվում են, կազմվում հաշվետվություններ, իսկ վարժանքների մասին գրառումները արվում են համապատասխան գրանցամատյանում:

- Հաստատությունը հիմնովին վերանորոգված է, միջանցքներում, խմբասենյակներում, սանհանգույցներում, աշխատասենյակներում տեղադրված են լոկալ ջեռուցման մարտկոցներ, որոնք պարբերաբար ստուգվում են համապատասխան մասնագետի կողմից, տեխնիկական անսարքություններից խուսափելու նպատակով:
- Ցուրտ ամիսներին հաստատության ներսում՝ միջանցքներում, խմբասենյակներում, սանհանգույցներում ջերմաստիճանը համապատասխանում է առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 12-ի N 50-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին: Ամենօրյա կատարված մոնիտորինգի արդյունքները ուղարկվում են Առողջապահության նախարարության ՀՎԿ Ազգային կենտրոն ՊՈԱԿ <<Համաճարակաբանական ֆիլտր >> իրականացնելու նպատակով:

- Ուսումնական հաստատությունը ապահովված է մշտական սառը և տաք ջրով: Հաստատությունում առկա են սաների և աշխատակիցների համար նախատեսված սանհանգույցներ, որոնք կապիտալ վերանորոգված են: Սանհանգույցները օրվա ընթացքում մի քանի անգամ ախտահանվում, մաքրվում են դաստիարակի օգնականների կողմից: Սանհանգույցներում տեղադրված են մաքրող միջոցների համար նախատեսված հատուկ պահարաններ, որտեղ մշտապես առկա են հիգիենայի պարագաներ՝ հեղուկ օձառ, թուղթ, ախտահանող նյութեր, որոնք սաներին ոչ հասանելի են:
- Սանհանգույցները հարմարեցված չեն ԿԶԱՊԿ սաների համար:
- Հաստատությունում գործում է սննդի կազմակերպման կետ՝ խոհանոց, որի գործունեությունը համապատասխանում է առողջապահության նախարարի 2024 թվականի փետրվարի 12-ի N 50-Ն հրամանով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին:

Սննդի բլոկի աշխատակիցները, կրում են համապատասխան համազգեստ: Խոհանոցում առկա է օդափոխման համակարգ:

Մենդի պատրաստումը երեք անգամյա՝ իրականացվում է ըստ նախապես հաստատված ճաշացանկի /10-12 օր պարբերականությամբ/:

Մենդամթերքի և բանջարեղենի պահեստներում առկա են ջերմաչափեր, խոնավացուցիչներ, որոնք ցուցում են սննդամթերքի պահպանման նորմերի կանոնները:

Ներքին գնահատման հանձնաժողովի կողմից իրականացրած դիտարկման-փաստագրման արդյունքում արձանագրվեց, որ հաստատությունում առկա են սննդի վերաբերյալ համապատասխան պաստառներ, որոնք արտացոլում են տրված ճաշատեսակի բաղադրիչները, սպիտակուցները, ճարպերը, ածխաջրերի և կալորիականության քանակը, և ԱՆ 2013թ-ի օգոստոսի 12-ի N 42 -Ն հրամանով ամրագրված նորմերն ու չափանիշները:

Հաստատության առաջին հարկում առկա է բուժկետ, որտեղ գտնվում են դեղորայքի և առաջին բուժօգնության պարագաներ, առաջին բուժօգնության դեղարկղիկը, սաների անտրոպոմետրիկ չափումների համար նախատեսված հասակաչափը, կշեռքը: Բուժկետում, բուժքրոջ կողմից, ըստ անհրաժեշտության ցուցաբերվում է առաջին բուժօգնություն սաներին, ինչպես նաև աշխատակիցներին: Բուժքույրը վարում է աշխատակիցների պարտադիր բժշկական զննության, պատրաստի սննդամթերքի նմուշառման, սննդամթերքի խոտանորշման, տարածքների ախտահանումների, աշխատակիցների առողջական վիճակի, դասընթացների վերաբերյալ գրանցամատյաններ, հետևում հաստատությունում սանիտարահիգիենիկ նորմերի և սննդի կազմակերպման ժամանակին և պատշաճ կատարմանն ու պահպանմանը:









Հաստատությունում առկա է բուժկետ						
Հաստատությունն ունի բուժաշխատող և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն (ընդգծել այո կամ ոչ բառերը)						
<u>Այո✓</u>			Ոչ			
Բուժկետի գտնվելու հարկը և տա բաժքը (քս)	Բուժաշխատողներ (թիվը և նրանց պաշտոնները)	Բուժկետում առկա գույքը	Բուժկետը վերանորոգված է, թե ոչ.		Բուժկետի սանիտարական վիճակը	Առաջին բուժօգնության միջոցների և դեղերի առկայությունը
	Մեկ բուժքույր	Գրասեղան,աթոռ Բժշկական սեղան Բժշկական թախտ Բժշկական կշեռք Հասակաչափ	Այո ✓	Ոչ	գերազանց	Բուժկետը հագեցած է անհրաժեշտ դեղերով և առաջին բուժօգնության միջոցներով:

--	--	--	--	--	--	--





Խումբը	Ամսաթիվը	Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված պարագաներն ու ուսումնական նյութերը	Մասնակից սաների և աշխատակիցների թիվը
Կրտսեր I խումբ	19.11.2024թ. 10/02/2025թ 07/04/2025թ 14/04/2025թ. 26/05/2025թ 30/05/2025թ	ԽՁ - Կ. Դ. Ուշինսկի <<Գայլն ու ուլիկները>>: Դհդ. խաղ <<Դիմակներ>>: ԻՇԱ- <<Անձնական հիգիենա>>: Դհդ. խաղ - <<Ճանաչենք հիգիենայի պարագաները>>: Թեմատիկ շաբաթ - <<Բնության երևույթները>>: ԽՁ - <<Բնության երևույթներ>>: ԻՇԱ- <<Բնություն>>, <<Ես և բնությունը>>: ԿԿԱ - <<Գիշեր>>, <<Ճանապարհ դեպի լուսին>>: ԿԿԱ - <<Անձրև>>, <<Արեգակը երկնքում>>: Դհդ. խաղ - <<Լուսինն ու աղետը>>, <<Անձրև է գալիս՝ կաթ-կաթ>>, <<Արև, Անձրև>>, <<Քամին և անձրևը>>: Թեմատիկ շաբաթ - <<Փողոց, լուսակիր, տրանսպորտ>>: ԻՇԱ - <<Լուսակիր>>: ԽՁ - <<Ինչո՞վ են մարդիկ երթևեկում>>, <<Գնացք>>: ԿԿԱ - <<Փողոց>>, <<Ինքնաթիռ>>: Դհդ. խաղ - <<Լուսակիր>>, <<Իմ սիրելի մեքենան>>, <<Անցնենք փողոցը>>, <<Երթևեկենք գնացքով>>, <<Ինքնաթիռ>>:	23 սան 10 աշխատակից
Կրտսեր II խումբ	11/11/2024թ 15/11/2024թ	Թեմատիկ շաբաթ - <<Բնության երևույթներ>>: ԽՁ – ծանոթացնել բնության երևույթների հետ, ոտանավորի ուսուցում մենմոտեխնիկա մեթոդով - <<Արև արև եկ,	

		եկ>, <<Անձրևի կաթիլների ճամփորդությունը>>: ԻՇԱ - <<Քամին և տերևները>>, <<Անձրև>>: Փորձ աշխ.- <<Ստանալ արհեստական անձրև>>: ԿԿԱ - <<Անձրև է գալիս>>, <<Ամպ և անձրև>>, <<Արևը շողում է>>: Դիդակտիկ խաղ՝ ՍԽԼՏ մեթոդով - <<Ինչ կլինի եթե...>>, <<Գտիր նմանը>>, <<Տերևները և քամին>>, <<Որն է ավելորդ>>, <<Մնջախաղ>>: Անհրաժեշտ պարագաներ՝ նկարներ, փրփուր, վարսահարդարիչ, հոփհար, գուաշ, բամբակ, գունավոր թղթեր, ամանի հեղուկ, գունավոր տերևներ, մկրատ: Թեմատիկ շաբաթ - <<Անձնական հիգիենա>>: ԻՇԱ - <<Ախտահանիչ նյութեր>>, <<Հիգիենայի պարագաներ>>: ԽԶ - <<Անձնական հիգիենա>>, <<Հասմիկն ու ջուրը>>: ԿԿԱ - <<Հիգիենայի պարագաներ>>, <<Սրբիչի նախշագարդում>>, <<Օճառ>>: Դիդ. խաղ - <<Որն է ավելորդը>>, <<Ասա մեկ բառով >>, <<Այո, ոչ>>, <<Մնջախաղ>>, <<Շարունակի միտքը>>: Դերային խաղ - <<Նապաստակը անտառում>>, <<Արջուկը չի լվանում իր ատամները>>, <<Խոզուկը չէր սիրում լվացվել>>: Թեմատիկ շաբաթ - <<Փողոց, լուսակիր, փոխադրամիջոց>>: ԽԶ - <<Լուսացույց, երթևեկության կանոններ>>, <<Փողոց, լուսակիր, փոխադրամիջոց>>: ԻՇԱ - <<Ինչով են մարդիկ երթևեկում, փոխադրամիջոց>>: ԿԿԱ- <<Լուսացույց>>, <<Ինքնաթիռ>>, <<Իմ փողոցը>>:	
	25/11/2024		
	29/11/2024		
	10/02/2025		
	14/02/2025		

		Դիդ. խաղ - <<Ամբողջացրու նախադասությունը>>, <<Կանգնիր, շարժվիր>>, <<Այո, ոչ>>, <<Ինչով են մարդիկ տեղաշարժվում>>, <<Գտիր սխալը>>, <<Վազող լուսացույց>>: Անհրաժեշտ պարագաներ. թեմային համապատասխան նկարներ, Թեմատիկ շաբաթ - <<Անվտանգ վարքագիծ>>: ԽՁ - <<Անվտանգ վարքագիծ>>, ոտոնավորի ուսուցում <<Փխիկի գնդակը>>: ԽՁ- <<Գնացք>> Ս. Կապուտիկյան, ոտանավորի ուսուցում: ԻՇԱ - <<Պահպանել բնությունը>>: ԿԿԱ - <<Լուսացույց>>, <<Ոստիկանի փայտիկը>>: Դիդ. խաղ - <<Առանձնացրու բնության նկարներ>>, <<Ճիշտ է, սխալ է>>, <<Փողոցն անցիր անվտանգ>>, <<Շարժվիր ըստ լուսացույցի գույների>>:	
	24/02/2025 28/02/2025		
	10/03/2025 14/03/2025	Թեմատիկ շաբաթ - <<Առողջ, անառողջ սնունդ>>: ԻՇԱ - <<Առողջ և անառողջ սնունդ>>: ԽՁ - <<Առողջ սնունդ >>, <<Ով աշխատի նա կուտի>>: ԿԿԱ - <<Առողջ սնունդ>>, <<Հավաքել առողջ և անառողջ սնունդ>>, <<Գազար>>, <<Լոլիկ>>: Դիդ. խաղ - <<Ասա մեկ բառով>>, <<Ինչն է ավելորդը>>, <<Ավարտիր նախադասությունը>>, <<Ով ինչ է ուտում>>: ՄԽԼՏ -<<Լավ է, վատ է>>:	

Միջին <<ա>> խումբ	11/11/2024	Թեմատիկ շաբաթ - <<Անվտանգ միջավայր>>:	
	15/11/2024	ԻՇԱ - <<Տրանսպորտի տեսակները>>, <<Ինչով են մարդիկ երթևեկում>>:	
		ԽԶ - <<Մեր փողոցը>>, <<Անվտանգ փողոց>>:	
		ԿԿԱ - <<Լուսացույց>>, <<Լուցկի>>:	
		Դիդ.խաղ - <<Քարացիք, շարժվիր>>, <<Մենք վարորդներ ենք>>, <<Օդում, ջրում ցամաքում>>, <<Ինչ կա մեր փողոցում>>:	
	18/11/2024թ	Թեմատիկ շաբաթ - <<Տարվա եղանակներ, բնության երևույթներ>>:	
	22/11/2024թ	ԽԶ - <<Տարվա եղանակները, բնության երևույթներ>>, <<Ամիսներ և չորս եղանակ>>:	
		ԻՇԱ - <<Քամի>>, <<Անձրև, ձյուն>>:	
		ԿԿԱ - <<Կայծակ>>, <<Տերև>>, <<Ամպ և անձրև>>:	
		Դիդ.խաղ - <<Լոտո>>, <<Որն է ավելորդ>>, <<Երբ է բնությունը նեղանում>>, <<Ինչ կլինեք, եթե...>>:	
	13/01/2025	Թեմատիկ շաբաթ - <<Առողջ ապրելակերպ, սպորտ>>:	
	17/01/2025	ԻՇԱ - <<Առողջ ապրելակերպ և սպորտ>>, <<Առողջության պահպանում>>:	
		ԽԶ - <<Իմ գնդակ>>, <<Սպորտը մեր կյանքում>>:	
		ԿԿԱ- <<Օլիմպիական դրոշ>>, <<Գնդակ>>, <<Ծանրաձող>>:	
		Դիդ.խաղ - <<Անվանիր սպորտաձևեր>>, <<Մնջախաղ >>, <<Լավ է, վատ է >>, <<Կարելի է, չի կարելի>>:	
	20/01/2025	Թեմատիկ շաբաթ - <<Առողջ սնունդ, վիտամիններ>>:	
	24/01/2025	ԻՇԱ – <<Առողջ, անառողջ սնունդ>>, <<Վիտամիններ>>:	
		ԽԶ - <<Առողջ սնունդ և վիտամիններ>>, <<Ով աշխատի նա կուտի>>:	

Միջին <<բ>> խումբ	18/11/2024 22/11/2024	ԿԿԱ- <<Իմ սիրելի ուսուցիչը>>, <<Սառցաշաքար>>, <<Վիտամիններով զամբյուղ>>: Դիդ.խաղ - <<Ինչն է լավ, ինչն է վատ>>, <<Գուշակիր հեքիաթը՝ ըստ նկարների>>, <<Որն է ավելորդը>>, <<Կարմիր գլխարկը բերում է զամբյուղով վիտամիններ>>:
		Թեմատիկ շաբաթ- <<Անվտանգ միջավայր>> ԽԶ - <<Անվտանգ միջավայր>>, <<Գառնիկ ախպեր>>: ԻՇԱ - <<Ճիշտ օգտվես, վնաս չի տա>>, <<Մաքուր պահենք մեր բնությունը >>:
		ԿԿԱ - <<Տաք ջրով լի կաթսա>>, <<Աղբարկղ>>, <<Վարդակ>>, <<Աղբահանության մեքենա>>: Դիդ.խաղ - <<Առանձնացրու վտանգավոր իրերը>>, <<Տաք է, սառն է>>, <<Այո կամ ոչ>>, <<Վտանգի գույներ>>, <<Ինչ կա տուփում >>:
		Թեմատիկ շաբաթ - <<Իմ փողոցը>>: ԽԶ - <<Կենդանիները սովորում են երթնեկության կանոնները>>, Ուսանավորի ուսուցում <<Լուսացույց>>:
		ԻՇԱ -<<Ով ինչով է երթնեկում>>, <<Երթնեկության նշանները>>: ԿԿԱ - <<Գնացք>>, <<Ավտոբուս>>, <<Լուսացույց>>, <<Ավտոմեքենա>>:
		Դիդ.խաղ - <<Օդում, ջրում ցամաքում>>, <<Ճիշտ է սխալ է>>, <<Այո կամ ոչ>>: Թեմատիկ շաբաթ - <<Առողջ սնունդ>>:
		ԽԶ - <<Մթերային խանութ>>, <<Ոսկե ձվիկը>>: ԻՇԱ - <<Առողջ սնունդ>>, <<Առողջ ափես>>:
		ԿԿԱ- <<Կես նարինջ>>, <<Մանդարին>>, <<Արքայախնձոր>>,
	13/01/2025 15/01/2025	

Ավագ խումբ		<<Ձվածեղ ափսեյով>>: Դիդ.խաղ - <<Ընտրիր գույնը>>, <<Ճիշտ է, սխալ է>>, <<Լավ է, վատ է>>, <<Շարունակիր միտքը>>: Թեմատիկ շաբաթ - <<Իմ մարմինը, անձնական հիգիենա>>: ԻՇԱ- <<Մարդու մաշկը>>, <<Անձնական հիգիենա>>: ԽԶ - <<Չոփչոփիկը>>: ԿԿԱ - <<Մարդ>>, <<Մարդ, ով գործողություն է կատարում >>, <<Ատամի խոզանակ>>: Դիդ.խաղ - <<Կոփիր մարմինդ>>, <<Գտնել գույգին>>, <<Ով շուտ կասի>>, <<Շարունակիր նախադասությունը>>, <<Այո կամ ոչ>>, <<Որն է ավելորդը>>: Թեմատիկ շաբաթ - <<Անվտանգ վարքագիծ>>: ԻՇԱ - <<Կրակը բարեկամ, կրակը թշնամի>>, <<Երկրաշարժ>>: ԽԶ - <<Գայլն ու յոթ ուլիկները>>: ԿԿԱ - <<Կրակ>>, <<Գործիքներ հրդեհից պաշտպանվելու համար>>, <<Կրակմարիչ>>: Դիդ.խաղ - <<Կրակը բարեկամ, կրակը թշնամի>>, մնջախաղ՝ <<Կրակ>>, <<Այո- ոչ>>: Թեմատիկ շաբաթ - <<Տարվա եղանակներ, եղանակային փոփոխություններ>>: ԻՇԱ - <<Տարվա եղանակներ>>, <<Բնության սեզոնային փոփոխություններ>>: ԽԶ - <<Եղանակ քույրերը>>: ԿԿԱ- <<Իմ սիրելի եղանակը>>, <<Ծառ>>: Դիդ.խաղ - <<Ճանապարհորդություն>>, <<Ծառերը տարվա եղանակին համապատասխան>>, <<Այդ երբ է լինում>>, <<Տարվա եղանակները>>,	
	17/11/2024		
	22/11/2024		
	25/11/2024		
	29/11/2024		
	02/12/2024		
	07/12/2024		

	20/01/2025 24/01/2025	<<Միքում եմ ամառը, որովհետև. . . >>: Թեմատիկ շաբաթ - <<Առողջ, անառողջ սնունդ, վիտամիններ>>: ԻՇԱ - <<Առողջ, անառողջ սնունդ>>, <<Վիտամիններ>>: ԽԶ - <<Առողջ ապրելակերպ>>: ԿԿԱ - <<Սննդամթերք>>, <<Արքայախնձոր>>, <<Մրգեր, բանջարեղեններ>>, <<Նուռ>>: Դիդ.խաղ - <<Ինչն է լավ, ինչն է վատ>>, <<Ասա հակառակը>>, <<Ավարտիր նախադասությունը>>, <<Հյուրընկալել Նունե տիկնիկին>>, <<Այգում, բանջարանոցում>>, <<Որն է ավելորդը>>, <<Միրգ է թե՞ բանջարեղեն>>: Թեմատիկ շաբաթ՝ <<Առողջ ապրելակերպ, սպորտ>>: ԻՇԱ - <<Սպորտի տեսակները>>, <<Առողջ ապրելակերպ, սպորտ>>: ԽԶ - <<Առողջ ապրելակերպ>>: ԿԿԱ- <<Լողավազան>>, <<Մարզագույք>>, <<Իմ սիրած սպորտաձևը>>: Դիդ.խաղ - <<Գուշակիր որ սպորտաձևն է >>, <<Ասա հակառակը>>, <<Ավարտիր նախադասությունը>>, <<Հրաշալի պարկ>>, <<Եկեք մարզվենք>>, <<Ինչն է լավը, ինչն է վատը>>: Թեմատիկ շաբաթ <<Փոխադրամիջոց, երթևեկության կանոնները>>: ԻՇԱ - <<Ինչ պատահեց, երբ լուսացույցը քնեց>>, <<Երթևեկության կանոնները>>: ԽԶ - <<Ինչ պատահեց, երբ լուսացույցը քնեց>>: ԿԿԱ - <<Ավտոբուս>>, <<Լուսացույց>>, <<Նավ>>: Դիդակտիկ խաղ - <<Ինչ կլինի, եթե լուսակիրը չաշխատի>>, <<Ավտոբուս>>, <<Առանձնացրու բառը>>, <<Օդում, ջրում, ցամաքում>>, <<Ավարտիր	
	27/01/2025 31/01/2025		
	9/05/2025 23/05/2025		

		նախադասությունը>>:	
--	--	--------------------	--

17/10/2024		ՕՂԱՅԻՆ ՏԱԳՆԱՊ	132
31/10/2024	Ազդարարման և իրազեկման պատասխանատու	<<Ճանապարհատրանսպորտային պատահարներ>>:	15
Նոյեմբեր	Heqiat mankapartez /ֆեյսբուք հարթակ/	<<Տարհանման պլաններում օգտագործվող պայմանական նշանները>>:	
13/11/2024	Առաջին բուժօգնության պատասխանատու	Թեմա ` <<Այրվածքներ>>, << Ցրտահարություն>>	

08/01/2025	Ազդարարման և իրազեկման պատասխանատու	<<Վարքականոններ անտառային հրդեհների ժամանակ>>	14
Հունվար	Heqiat mankapartez /ֆեյսբուք հարթակ/	Զնահոսք: Բնակչության վարքականոնները ձնահոսքերի ժամանակ	15


11/02/2025	Առաջին հոգեբանական աջակցություն	<Առաջին հոգեբանական օգնություն>>	14
21/02/2025	Ներառական կրթությունը՝ արտակարգ իրավիճակում	<<Խմբասենյակի անվտանգ վայրերը՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների համար>>	15
21.03.2025թ.	ԱՌԿ ոլորտային պատասխանատուներ	Արտակարգ իրավիճակների կանխարգելում, պաշտպանություն, հետևանքների հաղթահարում:	3 վարչական 11 մանկավարժ 30 ծնող





















Խմբասենյակի անվտանգ վայրերը հեռաշարժողական
խնդիրներ ունեցող երեխաների համար



4. ՄԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ, ՀՈԳԵՎՈՐ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄ


Ցուցանիշ	Այո	Ոչ
ա. ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների կողմից իրականացվում են սաների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, կանխարգելման և հանրային քննարկման աշխատանքներ.	√	
բ.ուսումնական հաստատությունն անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների միջոցով իրականացնում է սանի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ծնողավարման հմտությունների զարգացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ իրազեկման միջոցառումներ.	√	


Ամսաթիվը	կատարող	Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագորված պարագաներն ու ուսումնական նյութերը	Մասնակիցների թիվը Ծնողներ, մանկավարժական և վարչական կազմ
29.10.2024թ.	Մեթոդիստ՝ Է. Ղավալյան	<<Ինչպես կազմակերպել երեխաների մեղիակրթությունը>> ;	11 մանկավարժ 2 վարչական 20 ծնող
ՀՈԿՏԵՄԲԵՐ Heqiat mankapartez /Ֆեյսբուք հարթակ/	Մանկավարժ-հոգեբան՝ Գ. Հակոբյան	ՀՈԳԵԲԱՆԻ ԱՆԿՅՈՒՆ <<Ինչո՞ւ պետք է երեխան հաճախի մանկապարտեզ>>: <<Զբոսանքի կարևոր նշանակությունը>> :	
ՀՈԿՏԵՄԲԵՐ	Փոխտնօրեն՝ Ե.	ԾՆՈՂԱՎԱՐՄԱՆ	

<i>Heqiat mankapartez</i> <i>/ֆեյսբուք հարթակ/</i>	Թումանյան	ԳԱՂՏՆԻՔՆԵՐ	
<i>ՀՈԿՏԵՄԲԵՐ</i> <i>Heqiat mankapartez</i> <i>/ֆեյսբուք հարթակ/</i>	Լոգոպեդ՝ Ա. Ղազարյան	ԼՈԳՈՊԵԴԻ ԱՆԿՅՈՒՆ <<Ինչպե՞ս օգնել երեխային արձագանքել անվանը>>:	
07.11.2024թ	Մանկավարժ-հոգեբան՝ Գ. Հակոբյան	<<Խաղային գործունեության դերը և նշանակությունը երեխաների հուզականային և սոցիալ անձնային զարգացման ոլորտում>>:	11 մանկավարժ
<i>ՆՈՅԵՄԲԵՐ</i> <i>Heqiat mankapartez</i> <i>/ֆեյսբուք հարթակ/</i>	Լոգոպեդ՝ Ա. Ղազարյան	<<Ինչու՞ է հապաղում երեխայի խոսքը>>:	
<i>ՆՈՅԵՄԲԵՐ</i> <i>Heqiat mankapartez</i> <i>/ֆեյսբուք հարթակ/</i>	Մանկավարժ-հոգեբան՝ Գ. Հակոբյան	<<Մանկական կամակորրության հիմնական պատճառները և հաղթահարման ուղիները>>:	
<i>ԴԵԿՏԵՄԲԵՐ</i> <i>Heqiat mankapartez</i> <i>/ֆեյսբուք հարթակ/</i>	Լոգոպեդ՝ Ա. Ղազարյան	<<Հեռախոսների ազդեցությունը խոսքի զարգացման վրա>>:	
<i>ԴԵԿՏԵՄԲԵՐ</i> <i>Heqiat mankapartez</i> <i>/ֆեյսբուք հարթակ/</i>	Մանկավարժ-հոգեբան՝ Գ. Հակոբյան	<<Երեխայի ուշադրության կենտրոնացման ուղղված խաղեր>>:	

02.12.2024թ.	Ֆիզ հրահանգիչ՝ Գ. Կարապետյան դաստիարակ՝ Ա. Լույսուկյան	<<Առողջ ապրելակերպ>>	3 վարչական 11 մանկավարժ 30 ծնող
17.01.2025թ	Տնօրեն՝ Է. Հակոբյան Փոխտնօրեն՝ Ե. Թումանյան	<<Ինչպես զարգացնել երեխայի ստեղծագործական միտքը>>:	3 վարչական 11 մանկավարժ 25 ծնող
ՀՈՒՆՎԱՐ Heqiat mankapartez /Ֆեյսբուք հարթակ/	Լոգոպեդ՝ Ա. Ղազարյան	<<Շնչառություն և ձայն>>:	
ՓԵՏՐՎԱՐ Heqiat mankapartez /Ֆեյսբուք հարթակ/	Մանկավարժ-հոգեբան՝ Գ. Հակոբյան	<<Հետաքրքիր մոտեցումներ երեխային գրադեցնելու համար>>:	
14.02.2025թ.	Լոգոպեդ՝ Ա. Ղազարյան	<<Խոսքային հաղորդակցման և հետադարձ կապի հմտությունների ձևավորումը>>:	3 վարչական 11 մանկավարժ 20 ծնող
ՓԵՏՐՎԱՐ Heqiat mankapartez /Ֆեյսբուք հարթակ/	Փոխտնօրեն՝ Ե. Թումանյան	<<ԾՆՈՂԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ>> <<Սիրում եմ քեզ հետ....>>	
ՄԱՐՏ Heqiat mankapartez /Ֆեյսբուք հարթակ/	Լոգոպեդ՝ Ա. Ղազարյան	<<Ինչ պետք է անի 0-ից 1 տարեկան երեխան>>:	
ՄԱՐՏ Heqiat	Մանկավարժ-հոգեբան՝ Գ. Հակոբյան	<<Հետաքրքիր խաղեր երեխայի հիշողության գործընթացները	

